Հ ե տ ա զ ո տ ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք

Թեմա՝

«Ռուսաց լեզվի ուսուցումը երաժշտության և խաղի միջոցով»

Ուսուցչուհի՝

Առաքելյան Անահիտ

Դպրոց՝

Սևանի Խ.Աբովյանի անվ. ավագ դպրոց

Ղեկավար՝ Նեկտար Համբարձումյան

25.07.2022թ.

Բովանդակություն

Նախաբան.....1

Ենթագլուխ 1.....2

Ենթագլուխ 2.....5

Եզրակացություն և առաջարկություններ.....11

Օգտագործված գրականության ցանկ.....13

Ռուսաց լեզվի ուսուցումը երաժշտության և խաղի միջոցով

Նախաբան

Սույն հետազոտական աշխատանքը նվիրված է օտար լեզվի ուսուցմանը բավականին հետաքրքիր և ստեղծարար մեթոդների՝ երաժշտության և խաղի միջոցով, ինչպես նաև որոշ մեթոդաբանական հարցերի, խնդիրների, դասավանդման առավել ժամանակակից, նորարարական մոտեցումների վերլուծության, տվյալ մոտեցումների և մեթոդների կիրառման արդյունավետության, և այս ամենի համատեքստում՝ ուսուցիչ-աշակերտ փոխհամագործակցության:

Ուսուցման գործընթացը գլոբալ տեղեկատվական հասարակության և նորարարական տեխնոլոգիաներով համալրված մեր այս դարաշրջանում կրթության նկատմամբ պահանջում է ավելի ստեղծագործական մոտեցում: Տվյալ հետազոտական աշխատանքում ուսումնասիրվում է երաժշտության և խաղի ազդեցությունն անհատի զգացմունքների վրա, դիտարկվում են դրանց կիրառության օգուտը բժշկության, կրթության, և մասնավորապես օտար լեզվի դասավանդման մեջ: Համատեղելով երգն ու երաժշտությունը օտար լեզվի դասավանդման հետ՝ կարելի է թափանցել ենթագիտակցության խորքերը, ոգևորել և հետաքրքրություն առաջացնել մեծ դասականների, նրանց մշակույթի, պատմության, արվեստի նկատմամբ, նպաստել անձի լիարժեք զարգացմանը, ձևավորել ստեղծագործական մտածողություն և ճաշակ:

Նույն հաջողությամբ խաղը նպաստում է սովորողների ճանաչողական գործունեության զարգացմանը ռուսաց լեզվի

ուսումնասիրության մեջ: Այն կրում է զգալի բարոյական սկզբունք, քանի որ օտար լեզվի յուրացումը դարձնում է ուրախ, ստեղծագործ և հավաքական: Խաղերի կիրառման հաջողությունը կախված է առաջին հերթին անհրաժեշտ բանավոր հաղորդակցության մթնոլորտից, որը ուսուցիչը ստեղծում է դասարանում: Կարևոր է, որ ուսանողները վարժվեն նման շփմանը, տարվեն և դառնան ուսուցչի հետ նույն գործընթացի մասնակից: Սակայն պետք չէ մոռանալ ,որ օտար լեզվի դասը միայն խաղ չէ. Ուսուցչի և սովորողների միջև վստահությունն ու շփման հեշտությունը, որն առաջացել է ընդհանուր խաղային մթնոլորտի և հենց խաղերի շնորհիվ, երեխաներին տրամադրում է լուրջ խոսակցությունների, ցանկացած իրական իրավիճակի քննարկմանը:

Ենթագլուխ 1

Երաժշտության դերն ու ազդեցությունը դաստիարակության մեջ

Մեթոդաբանական գրականության մեջ տարբերակվում են լեզվուսուցման երեք առանցքային մոտեցումներ՝

- Կառուցվածքային
- Գործառական
- Ինտերակտիվ

Կառուցվածքային մեթոդ - լեզուն դիտարկվում է որպես քերականական տարրերի կապակցման համակարգ,

գործառական մեթոդ - լեզուն դիտարկվում է որպես որոշակի գործառույթների արտահայտման և իրականացման գործիք

ինտերակտիվ մեթոդ - լեզուն դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման միջոց:

Ելնելով լեզվուսուցման վերոհիշյալ մոտեցումներից՝ որոշ աղբյուրներում սովորաբար տարբերակում են երեք հիմնական մեթոդներ՝

- քերականական,
- հաղորդակցական
- հանրային

Ներկայումս ավելի մեծ հեղինակություն են վայելում նորարարական տեխնոլոգիաների հիման վրա ձևավորված համացանցային աղբյուրները, որոնք նույնպես օտար լեզուների ուսուցման արդյունավետ միջոց են:

Քերականական մեթոդը դասավանդման ավանդական մեթոդ է, որն ի հայտ է եկել 18-րդ դարի վերջերին և վերջնականապես ձևավորվել 20-րդ դարի սկզբներին՝ ստանալով քերականական թարգմանության մեթոդ անվանումը: Միացյալ Նահանգներում այն հայտնի է նաև Պրուսյան մեթոդ անվամբ (Kelly, 1969 : 53): Երկար ժամանակ այն միակ ընդունելի մեթոդն էր: Այս ավանդական մեթոդի հիմքում միայն տեքստերի ընթերցումն ու թարգմանությունն են՝ շեշտը դնելով բառուսուցման, ուղղագրության և քերականության վրա՝ առանց գործնական կիրառության: Ներկայումս այն ձևափոխվել է և վերանվանվել բառաքերականական մեթոդ, որն արդեն հիմնվում է կարդալու, լսելու և բանավոր ու գրավոր խոսքի վրա: Այն կիրառվում է ժամանակակից լեզվաբանական տարբեր դպրոցներում: Հաղորդակցական մեթոդն ի հայտ է եկել 20-րդ դարի 60-ական թվականներին: Այս մեթոդի նպատակը աշակերտների հաղորդակցական հմտությունները զարգացնելն է, որպեսզի նրանք կարողանան կոնկրետ հաղորդակցական իրավիճակում կատարել լեզվական միջոցների ճշգրիտ ընտրություն, ինչպես նաև տարբերակեն խոսքային ոճերի և տեքստերի տեսակները: Լեզվաբանական դպրոցների մեծ մասը հիմնվում է այս մեթոդի վրա, որում բացակայում են թարգմանական վարժությունները:

Հաղորդակցական մեթոդը հագեցած է գործնական առաջադրանքներով, ոչ ադապտացված տեքստերով և տեսալսողական նյութերով: Դրա կիրառումը, ըստ իսպանացի հայտնի մեթոդիստ Պ. Մելերո Աբադիանի, ընթանում է երեք փուլով, այն է՝

- ինչ դասավանդել,
- ինչպես դասավանդել
- ինչպես զարգացնել հաղորդակցական գործընթացները դասարանում (Melero Abadía, 2004 : 711):

Այս մեթոդը հիմնականում բնութագրվում է որպես ընդհանուր ուսուցման մոտեցում և ոչ թե որպես հստակ որոշված դասավանդման մեթոդ: Ավստրալիացի հայտնի լեզվաբան Դավիթ Նունանը վերջինիս համար առանձնացրել է մի շարք ընդհանուր հատկանիշներ և սկզբունքներ՝ փաստելով, որ աշակերտը պետք է ակտիվորեն ներգրավվի ուսուցման գործընթացի մեջ՝ որպես ուսուցումը խթանող ակտիվ սուբյեկտ: Նա փաստում է, որ այս մեթոդի դեպքում աշակերտն ուշադրությունն ավելի շատ կենտրոնացնում է իմաստի, քան լեզվական կաղապարի վրա (Nunan, 1989 : 10): Մեթոդը ենթադրում է օտար լեզվի ուսուցում՝ հիմնված ոչ թե զուտքերականական կառույցների, այլ բանավոր խոսքի և հաղորդակցության վրա, որոնց շնորհիվ ուսանողը կտիրապետի նաև տվյալ քերականական կառույցներին: Սակայն ինչպես արդարացիորեն նշում է Հ. Բաղդասարյանը, օտար լեզվի դասընթացը չի կարող հիմնվել բացառապես հաղորդակցական մեթոդի վրա, քանի որ այդ դեպքում հաշվի չեն առնվում հաղորդակցության համար անհրաժեշտ բոլոր լեզվական հմտությունները. հաղորդակցական ակտը գերազանցապես հիմնվում է խոսակցական լեզվի վրա՝ բավարար չափով հաշվի չառնելով սոցիալ մշակութային համատեքստը և հաղորդակցության կոնկրետ նպատակները :

Հաղորդակցական մեթոդի հիմքում ընկած են դերախաղը, հարցազրույցները, ուսանողների շրջանում տեղեկատվության

փոխանակումը, տարատեսակ խաղերը, հարցումները, զույգերով աշխատանքը և այլն, որոնք զարգացնում են աշակերտների՝ ճշգրիտ քերականական կառույցներ կազմելու ու դրանք օգտագործելու ունակությունները և կատարելագործում են նրանց արտասանությունը: Պատմականորեն այս մեթոդը լրացնում է ձայնալսողական մեթոդը. այն հասկացական-գործառական մեթոդի ընդլայնված տարբերակն է, քանի որ նույնպես կարևորում է լեզվի գործառույթների ուսուցումը:

Այնուամենայնիվ հարկ է փաստել, որ ինչպես քերականական, այնպես էլ հաղորդակցական մեթոդը կատարյալ չէ: Այդ իսկ պատճառով ստեղծվեց հանրային մեթոդը, որը եկավ լրացնելու և համադրելու այս երկու մեթոդները՝ հանդես գալով որպես դրանց ավելի ամբողջական ու կատարյալ տեսակ: Քանի որ և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքը հավասարապես կարևոր են լեզուն կատարյալ տիրապետելու համար, հանրական մեթոդը լեզվի ուսուցումը հավասարապես բաշխեց այդ երկուսի միջև:

Հանրական մեթոդը խթանում է ուսուցչի և աշակերտի փոխհամագործակցությունը դասարանում, օտար լեզվի ուսուցումը համարում է կոլեկ- 34 տիվ ձեռքբերում՝ հիմնված ոչ թե մրցակցության, այլ համագործակցության վրա: Զարգացնում է ստեղծագործական միտքը և այլ անձանց հետ հաղորդակցվելու ունակությունները: Դասընթացի ընթացքում քննվում են քերականությունը, բառապաշարը և հնչյունաբանությունը: Տվյալ լեզվի մշակույթը նույնպես խորազնին քննության է առնվում: Ուսուցիչը ուսուցման գործընթացում պետք է լսի, հասկանա և աջակցի ուսանողին, կազմի առաջադրանքներ, իսկ ուսանողի դերն ակտիվորեն մասնակցելն է, դասընթացի մյուս անդամներին ներգրավելն ու միմյանց օգնելը, որն ինքնին խթանող գործընթաց է:

Այնուամենայնիվ հարկ է փաստել, որ ինչպես քերականական, այնպես էլ հաղորդակցական մեթոդը կատարյալ չեն, եթե նույնիսկ ձայնալսողական համակարգն է ի գործ դրվում: Այդ իսկ պատճառով մեզ օգնության է գալիս հենց ինքը՝ երաժշտությունը, որպես մի ազդեցիկ ուժ հենց ձայնալսողական համակարգի վրա, մղում՝ դրդելու լսել, ընկալել, յուրացնել օտար լեզուն՝ ազդելով ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական մակարդակների վրա՝ որպես հաղորդակցման, տալու և վերցնելու, սովորելու և ընկալելու արվեստի:

Սովորեցնել աշակերտներին ռուսաց լեզուն, դա իմ տարերքն է, քանի որ մասնագիտությունս սիրում եմ անչափ, և տարատեսակ նորագույն մեթոդներից ոգեշնչված, օրինակ ուսուցումը խաղի և երաժշտության միջոցով անցկացնելը, փորձում եմ հնարավորինս արդյունավետ կազմակերպել դասապրոցեսը:

Ռուսաց լեզվի դասավանդումն իմ մասնագիտությունն է, և ես ինձ չեմ կարող պատկերացնել առանց դրա արդեն շուրջ 30 տարի: Ինչպես բոլոր մասնագետներն, այնպես էլ ես, մասնագիտական որոնումներին զուգահեռ, ունենք մի շարք նախասիրություններ և հետաքրքրություններ, որոնց մեջ տեղ է զբաղեցնում նաև երաժշտությունը: Վստահ կարող եմ նշել, որ յուրաքանչյուր անհատի կյանքում նշանակալից է երաժշտական կրթության դերը: Երաժշտությունն ու երգերը մեզ ուղեկցում են մեր ամբողջ կյանքի ընթացքում, տարբեր իրավիճակներում, ուրախ և տխուր պահերին: Դրանք հաճույքի, զվարճանքի և ոգեշնչման մեծ աղբյուր են, հաղորդակցման ու շփման հզորագույն միջոց:

Եթե լեզուն մարդկային հաղորդակցության, որոշակի հասարակության, մարդկանց խմբի մեջ մտքերի փոխանակման և փոխըմբռնման հիմնական միջոցն է, ապա երաժշտությունը վերազգային լեզու է, որը բոլորն են հասկանում՝ անկախ ազգային, տարիքային, սեռական պատկանելությունից: Երաժշտությունը հաղորդակցման հզոր միջոց է, որի օգնությամբ մարդիկ փոխանցում

և կիսում են հույզեր, իմաստներ, մտադրություններ և զգացմունքներ, չնայած այն տարբեր լեզուներին, որոնցով իրենք խոսում են:

Լինելով մասնագիտությաբ բանասեր և երաժշտության սիրահար, ինչպես նաև ունենալով երաժշտական կրթություն, ինձ առավել է հետաքրքրում երաժշտության դերն ու ուժը ուսուցման մեջ, ինչպես այն կարող է ուսուցման գործընթացը դարձնել առավել հետաքրքիր և գրավիչ, իսկ նյութը՝ հեշտհիշվող ու յուրացվող:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչու է անհրաժեշտ երբեմն համակցել երաժշտությունն ու օտար լեզուն, ինչ առավելություններ է ընձեռում երգն ու երաժշտությունը դասավանդման մեջ, ինչպես այն կարող է օգնել սովորել և հիշել նյութը հեշտությամբ ու հաճույքով: Երգերը դասավանդման ժամանակ կարող են մի քանի նպատակներ հետապնդել.

- Դրանք նպաստում են աշակերտների ունկնդրման հմտության զարգացմանը, ճիշտ առոգանությանը, հետևաբար բարելավում են նրանց բանավոր խոսքը:
- Կարող են օգտակար գործիք հանդիսանալ նոր բառապաշարի, արտահայտությունների, քերականական կառույցների ձեռքբերման համար: Ինչպես ասում է Թ. Միրֆին «ավելի հեշտ է օտար լեզվով երգել, քան խոսել»:

Կա կարծիք, որ դասարանում երգերի օգտագործման մեծագույն առավելությունն այն է, որ դրանք զվարճալի են: Իսկ զվարճանքն ու հաճույքը սովորելու և գիտելիք ձեռք բերելու կարևորագույն նախապայմաններից են: Գոյություն ունի մեծածավալ հետազոտություն նվիրված երաժշտության բուժիչ ազդեցությանը: նրանցից ամենաարժեքավորներից է 1806թ. Ս. Մեթյուսի և Պ. Վագների On the Effects of Music in Curing and Palliating Diseases” գիրքը:

Կատարված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս վստահաբար ասել, որ երաժշտական թերապիան առողջապահական մասնագիտություն է: Երաժշտական թերապևտները երաժշտության միջոցով վերականգնում են մարդկանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան առողջությունը: Ապացուցված է, որ երաժշտությունը կարող է բարերար ազդեցություն ունենալ մարդու մտավոր, հոգեկան և ֆիզիկական առողջության վրա. այն բարելավում է իմունային համակարգը , վերացնում անհանգստությունն ու վախերը: Իսկ ավելի կոնկրետ երգն ու երաժշտությունը ներդաշնակություն են մտցնում մտքի, մարմնի և հոգու մեջ:

Անհերքելի է նաև այն փաստը, որ դրական մթնոլորտը աշակերտների առաջադիմության գրավականներից մեկն է: երաժշտությունը առաջացնում է որոշակի էմոցիոնալ ֆոն, դրական հույզեր և ոգևորություն, բարձրացնում է տրամադրությունը: Կան աշակերտներ, որոնք պնդում են, թե իրենք երաժշտություն են լսում դաս սովորելիս, քանի որ այն օգնում է հեշտ յուրացնելնյութը: Օրինակ ռուսերեն երգեր լսելը նույնպես նպաստում է ռուսաց լեզվի յուրացմանը: Սկզբում աշակերտը լսում է կատարումը, ապա ծանոթանում կոմպոզիտորի նկարի հետ, այնուհետև սկսում է ճիշտ արտասանել նրա անունը և ,իհարկե, սկսում է ավելի ճիշտ արտասանել բառերը, փորձում է նաև գրել որոշ նոր բառեր հնչած կատարումից և այդպես շարունակ

Ենթագլուխ2

Խաղի դերն ու ազդեցությունը դասավանդման մեջ

21-րդ դարում գլոբալացման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում փոխվում են նաև դասավանդման

մեթոդները, նյութի բովանդակությունը, ուսուցիչների և ուսանողների դերերն ու որոշ գործառույթները: Կրթության մեջ տեղեկատվության համատարած հասանելիության պայմաններում ավելի ու ավելի դժվար է դառնում աշակերտներին գրավելը, հետաքրքրելն ու մոտիվացնելը: Ավելի մեծ կարևորություն են ձեռք բերում դասավանդողների և սովորողների գործնական հմտությունները, համակարգչից և համացանցից գրագետ օգտվելու, ժամանակի ու նոր զարգացումների հետ համընթաց քայլելու կարողությունը: Եվ վերջապես, ինչ գիտելիքներ ու հմտություններ կարող են մատուցել ուսուցիչները, որոնք չես կարող ձեռք բերել համակարգչի և համացանցի միջոցով:

Ահա այս մարտահրավերներն էլ թելադրում են կրթական նոր հրամայականներ: օրինակ ըստ ***Pearson*** հրատարակչական ընկերության անցկացրած համաշխարհային ամենամյա հետազոտության արդյունքների, ֆինլանդիան իր կրթական համակարգի որակով հինգերորդ տեղում է: ֆիննական մոդելը օրինակ է ծառայում շատ երկրների , այդ թվում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համար: Արդյոք որոնք են դրա հաջողության բանալիները: ֆիննական կրթական համակարգում մինչ ավագ դպրոցը չի կիրառվում թեստային համակարգ: Դասավանդումը իրականացվում է խաղերի միջոցով: Բոլոր դասերի միջև աշակերտներին հատկացվում է 15 րոպե ընդմիջում: Բարձր որակավորում ունեցող ուսուցիչները ազատ

են դասավանդման մեթոդների ընտրության հարցում: Ուսուցչի մասնագիտությունը մրցակցային է , հետևաբար ուսուցիչները բարձր են վարձատրվում և վաստակում են ավելի շատ, քան իրենց ամերիկյան և մյուս եվրոպական գործընկերները: չնայած իրենց հասած հաջողություններին՝ ֆիննները մշտապես աշխատում են կրթական ոլորտի բարելավման և նոր ծրագրերի ստեղծման ուղղությամբ: Ինձ առավել հետաքրքրեց նրանց նորամուծություններից այն, որը վերաբերում էր առարկաների միավորման գաղափարին: Ֆիննները այն անվանում են « երևույթների» կամ «իրավիճակների» դասավանդում: Օրինակ՝ աշակերտը մասնագիտական դասընթացներից ընտրում է բանկային աշխատանքը: Տվյալ իրավիճակում նա ստանձնում է բանկի

աշխատակցի կամ հաճախորդի դերը և պետք է կիրառի մայրենիի, մաթեմատիկայի, ռուսաց լեզվի գիտելիքների տարրեր, որոշակի համակարգչային գիտելիքներ և հմտություններ: Այս մոտեցումը կարող ենք կիրառել ավագ դպրոցի աշակերտների հետ, օրինակ իրավագիտական հոսքում ռուսաց լեզվի ժամերին խնդրահարույց իրավիճակների շուրջ դերային քննարկումներ կատարել և առաջարկել տարբեր լուծումներ: Այստեղ ցանկանում եմ անդրադառնալ խաղերի միջոցով ռուսաց լեզու դասավանդելուն: Ի լրումն խաղային հաղորդակցության ձևերի, որոնք համապատասխանում են աշակերտների տարիքային որոշակի հատկանիշներին և որոշակի տարիքային փուլում նրանց առաջատար գործունեությանը, երիտասարդ, միջին և մեծ տարիքի դպրոցականների հետ կարելի է կազմակերպել ամենօրյա բովանդակության դերային խաղեր ձևավորել խոսքի էթիկետի նորմեր, վարքագծի մշակույթի դաստիարակություն: Դպրոցականները սովորում են պատշաճ կերպով ողջունել միմյանց և մեծերին, դիմել զրուցակցին, երախտագիտություն հայտնել, ներողություն խնդրել և այլն: Դերային խաղը հիմնված է միջանձնային հարաբերությունների վրա, որոնք իրականացվում են հաղորդակցության գործընթացում: Որպես միջանձնային հաղորդակցության մոդել՝ դերախաղը առաջացնում է հաղորդակցության անհրաժեշտություն, խթանում է օտար լեզվով հաղորդակցությանը մասնակցելու հետաքրքրությունը և այս առումով կատարում է մոտիվացիոն և խրախուսական գործառույթ:

Դերային խաղը կարող է վերագրվել կրթական խաղերին, քանի որ այն մեծապես որոշում է լեզվական գործիքների ընտրությունը, նպաստում է խոսքի հմտությունների և կարողությունների զարգացմանը և թույլ է տալիս մոդելավորել ուսանողների հաղորդակցությունը տարբեր խոսքային իրավիճակներում: Այլ կերպ ասած, դերային խաղը միջանձնային միջավայրում DR-ի հմտություններն ու կարողությունները յուրացնելու վարժություն է: Այս առումով դերախաղն ապահովում է դաստիարակչական գործառույթ:

Դերային խաղերը դաստիարակում են գիտակցված կարգապահություն, աշխատասիրություն, փոխօգնություն, դեռահասի ակտիվություն,

տարբեր գործունեությամբ զբաղվելու պատրաստակամություն, անկախություն, սեփական տեսակետը պաշտպանելու կարողություն, նախաձեռնություն ցուցաբերելու, որոշակի պայմաններում լավագույն լուծումը գտնելու կարողություն, այսինքն. կարելի է խոսել դերային խաղի դաստիարակչական ֆունկցիայի մասին:

Դերախաղը ձևավորում է դպրոցականների կարողությունը՝ խաղալու այլ անձի դերը, իրենց տեսնելու հաղորդակցման գործընկերոջ դիրքից: Այն կենտրոնացնում է ուսանողներին սեփական խոսքի վարքագծի և զրուցակցի վարքագծի պլանավորման վրա, զարգացնում է իրենց գործողությունները վերահսկելու, ուրիշների գործողությունների օբյեկտիվ գնահատական տալու ունակությունը: Հետևաբար, դերային խաղը AR ուսուցման գործընթացում կատարում է կողմնորոշիչ գործառույթ: Դեռահասները ձգտում են հաղորդակցության, հասուն տարիքի, իսկ դերախաղը նրանց հնարավորություն է տալիս դուրս գալ իրենց գործունեության համատեքստից և ընդլայնել այն: Ապահովելով դեռահասների ցանկությունների կատարումը՝ դերախաղը դրանով իսկ իրականացնում է փոխհատուցման գործառույթ:

Զարգացման մեջ դերակատարման գործառույթը հասկանալու համար առաջնային նշանակություն ունի կարիքների ոլորտի զարգացման, խաղի մեջ ձևավորված նոր կարիքների առաջացման համար դրա նշանակության պարզաբանումը: Նույն խաղը կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում: Այնուամենայնիվ, ամեն ինչ կախված է ուսուցչի աշխատանքի կոնկրետ պայմաններից: Պետք է միայն հիշել, որ խաղերի ողջ գրավչության և արդյունավետության համար պետք է պահպանել չափի զգացում, հակառակ դեպքում նրանք կհոգնեցնեն աշակերտին և կկորցնեն հուզական ազդեցության թարմությունը: Խաղերի մեծ մասը կապված չէ որևէ կոնկրետ թեմայի հետ, ուստի, բնականաբար, դրանք պարունակում են ուսանողներին անծանոթ բառապաշարի որոշակի տոկոս: Խորհուրդ է տրվում այն մուտքագրել խաղի պայմանները բացատրելու գործընթացում:

Բառապաշարի ներդրման մեթոդները կարող են տարբեր լինել: Դրանցից մեկը տեսողական տեսանելիությունն է, որը ներառում է ոչ միայն նկարի կամ առարկայի տեսանելիությունը, այլ նաև շարժումները,

ժեստերը, դեմքի արտահայտությունները և այլն: Եվ վերջապես, որոշ դեպքերում, դուք կարող եք օգտագործել մեկ փոխանցում: Ամեն դեպքում, անծանոթ բառը բացատրելու համար հատկացված ժամանակը անպայման կվճարի, քանի որ խաղը սկսելուց հետո ուսուցիչը այն բազմիցս կօգտագործի, և այն նոր բառապաշարը, որը երեխաները կսովորեն խաղի ընթացքում, կակտիվանա:

Դասի խաղերի տեղը և խաղին հատկացված ժամանակը կախված են մի շարք գործոններից՝ սովորողների պատրաստվածությունից, ուսումնասիրվող նյութից, դասի կոնկրետ նպատակներից և պայմաններից և այլն: Այսպիսով, ասենք, եթե խաղն օգտագործվում է որպես ուսումնական վարժություն նախնական համախմբման ժամանակ, ապա այն կարող է տեւել դասի 20-25 րոպե: Հետագայում նույն խաղը կարելի է խաղալ 3-5 րոպե և ծառայել որպես արդեն իսկ լուսաբանված նյութի յուրօրինակ կրկնություն, ինչպես նաև հանգստություն դասի ժամանակ: Մի շարք քերականական խաղեր, օրինակ, կարող են արդյունավետ լինել նոր նյութի ներդրման համար: Խաղերի կիրառման հաջողությունը կախված է առաջին հերթին անհրաժեշտ բանավոր հաղորդակցության մթնոլորտից, որը ուսուցիչը ստեղծում է դասարանում: Կարևոր է, որ ուսանողները վարժվեն նման շփմանը, տարվեն և դառնան ուսուցչի հետ նույն գործընթացի մասնակից: Տարբեր լեզուներով «խաղ» տերմինը համապատասխանում է կատակ և ծիծաղ, թեթևություն և հաճույք հասկացություններին և ցույց է տալիս այս գործընթացի կապը դրական հույզերի հետ:

Խաղը հատուկ կազմակերպված գործունեություն է, որը պահանջում է հուզական և մտավոր ուժի լարվածություն: Խաղը միշտ որոշում է կայացնում՝ ի՞նչ անել, ի՞նչ ասել: Այս հարցերը լուծելու ցանկությունը սրում է խաղացողների մտավոր ակտիվությունը: Իսկ եթե երեխան միաժամանակ խոսում է օտար լեզվով? Այս գործունեության մեջ կան հարուստ ուսուցման հնարավորություններ: Երեխաների համար խաղը հիմնականում հետաքրքիր գործունեություն է: Խաղում բոլորը հավասար են: Դա իրագործելի է նույնիսկ ամենաթույլ ուսանողների համար: Հավասարության զգացում, խանդավառության և ուրախության մթնոլորտ, առաջադրանքների իրագործելիության զգացում - այս

ամենը երեխաներին հնարավորություն է տալիս հաղթահարել ամաչկոտությունը, որը խանգարում է նրանց ազատորեն օգտագործել օտար լեզվի բառերը խոսքում և ունի բարենպաստ ազդեցություն ուսուցման արդյունքների վրա:

Եզրակացություն և առաջարկություններ

Կատարելով հետազոտական աշխատանք ինձ հոգեհարազատ թեմայի՝ երաժշտության՝ որպես կրթության հետ փոխկապակցված սեկտորի շուրջ, քանի որ ինքս էլ, լինելով մանկավարժ, ունեմ նաև երաժշտական կրթություն, կարող եմ փաստել հետևյալը, որ երաժշտությունը, ոչ միայն միջոց է ընկալելու և զգալու գեղեցիկը, վսեմը, բարին, հասկանալու, տարբերակելու լավն ու վատը, այլև այն երեխայի անհատականության զարգացման վրա ազդող կարևորագույն գործոն է. այն տալիս է գեղագիտական դաստիարակություն, կարծես դաստիարակում է հոգին:

Կատարելով հետազոտական աշխատանք և ամեն օր լինելով դրա մեջ՝ կարող եմ առանձնացնել երկու կարևոր գործոն, որոնք նպաստում են երեխաների մոտ գիտելիքների ձեռքբերմանն ու մտապահմանը երաժշտության միջոցով, այն է

- Ասոցացիա
- Լսողական հիշողություն

Ասոցիացիան փիլիսոփայական տեսություն է, որն ընդգծում է փորձի դերը ուսման մեջ և գիտելիքների ներմուծումը:

Ըստ Դեյվիդ Հյումի (1711-1776թթ.) մարդկային ողջ գիտելիքն իր ծագումն ունի ընկալումների մեջ: Դրանց շրջանակներում նա առանձնացրել է երկու կատեգորիաներ՝

1. տպավորություններ, որոնք բաղկացած են զգացումներից՝ տեսածից, լսածից և ապրածամենինչից:
2. գաղափարները, որոնք առաջացել են զգացմունքներ առաջացնող այս երևույթների արտացոլումից:

Այսպիսով քննարկենք մեկ դեպք: Ենթադրենք ռուսաց լեզվի և գրականության միջոցառման նախապատրաստական շրջանն է և պետք է հնչի Ա.Ս. Պուշկինի <<Я Вас любил>> ստեղծագործությունը, որը պետք է զուգադրվի համապատասխան երաժշտությամբ՝ օրինակ կոմպոզիտոր Եվգենի Դմիտրեվիչ Դոգայի հայտնի վալսով: Ամեն օր փորձերի ժամանակ, երբ հնչում է այդ մեղեդին, կհնչեն նաև ստեղծագործության սիրո տողերը՝ ձևավորելով ասոցացիայի նուրբ երանգներ դեռահասության տարիքում գտնվող աշակերտների մոտ: Եվ ամեն անգամ, արդեն, երբ նրանք ինչորմիտեղ կլսեն այդ վալսը, նրանց մտքին կգա արդեն Պուշկինի հանճարեղ ստեղծագործությունը: Ստացվում է, որ մի ողջ դասարան երաժշտական ասոցացիայի միջոցով ակամայից անգիր կհիշի Պուշկինի հանչճարեղ տողերը:

Ինչ վերաբերում է լսողական հիշողությանը, ապա պետք է նշել , որ լսողական հիշողության միջոցով պահպանված գիտելիքները երբեմն մինչև կյանքի վերջ դաջված են մնում մարդկային ուղեղում, առավելևս, երբ դալինում է երաժշտության միջոցով:

Այսպիսով կատարելով հետազոտական աշխատանք ուղղված երաժշտության ազդեցությանը, վերջինիս որպես գործոն գիտելիքների ձեռքբերման և օտար լեզվի ուսուցանման մեջ, հանգելով մի շարք եզրակացությունների, առանձնացրել եմ նաև առաջարկությունների մի խումբ, այն՝

- Ռուսաց լեզվի և հատկապես ռուս գրականության դասաժամերի ընթացքում ամսական առնվազն մեկական օր հատկացնել երաժշտական մոտիվացիային՝ զուգադրելով համապատասխան երաժշտությունը համապատասխան գրական ստեղծագործության հետ, օրինակ մայիսի 9 և Լեվ Լեշենկոյի <<Հաղթանակի օր>> ստեղծագործությունը:

Այստեղ երկուստեք կարևորվում և տպավորվում են՝ օրվա խորհուրդը և՝ երգի բառերը:

- Ամսական կտրվածքով մեկական անգամ դասը զուգորդել նաև խաղերով : Ավագ դպրոցում, օրինակ, խաղերը ցանկալի են, որպեսզի ավելի ինտելեկտուալ բնույթ կրեն: Իսկ ավելի ցածր դասարաններում արդեն բնականաբար խաղի բնույթը կտարբերվի:

Երեխաները մեր կյանքի շարժիչ ուժն են, իսկ նրանց կրթելը՝ մանկավարժի սրբազան պարտականությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արշակ Բալայան, Փիլիսոփայություն, դասախոսությունների համառոտագրեր

2. Ս. Մեթյուա, Պ. Վագներ ,,On the effects of music in curing and palliating diseases''

3. Н. Николаева, “Игра и ее роль в обучении иностранному языку”, Москва, 2019
4. А. Куртукова, “Игровые приемы при формировании навыков овладения иностранным языком у детей старшего дошкольного возраста”, 2014
5. И. Андреева, “Использование разножанровой молодежной музыки в обучении монологической речи учащихся-подростков”, 2002
6. М. Перетятко, “Использование музыки как технологии на уроках иностранного языка”, 2016
7. Д. Кабалевский, “Основные принципы и методы программы по музыке для общеобразовательной школы”, Москва, 2022
8. Ш. Аманашвили, “Психологические особенности усвоения второго языка младшими школьниками”, Москва- Воронеж, 2004
9. И. Журавлева, “Возрастные особенности при обучении иностранному языку”, 2012
10. С. Миллер, “Психология игры”, 1999

11. В. Миронова, “Открытые уроки и праздники на английском языке”, 2006